

# ՍՅՈՒՆԻԱՍ ԵՐԿԻՐ

Գինը 100 դրամ:

ԵՐԵՎԱՆԻ

14 ՓԵՏՐԱՐԻ 2012թ. • № 3 (244)

www.syuniacyerkir.am

Եվ խոսք չի՝ բուննի այլևս  
այն երկրում,  
որով անցել է Աթիլի հին  
ձին...  
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



Նուստրոպոլիսի մ. Սանտաբարբառի

## Ուժանիս. կապանյան այդ գյուղը եւս՝ լինել-չլինելու երկընտրանքի առջեւ

### ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուժանիս տանող ճանապարհն անցնում է Դիցմայրի, Ագարակ, Եղվարդ գյուղերի տարածքով: Մենք հաճելիորեն զարմացանք, երբ նկատեցինք ենթաշրջան տանող ճանապարհը մաքրված մեկ օր առաջ տեղացած ձյունից: Բայց ասֆալտապատ ճանապարհը հասնում է մինչեւ

Ագարակ գյուղի կենտրոն, իսկ ձյունից մաքրված ճանապարհը՝ մինչեւ Ուժանիս, պատասառի վրա փռված էր միայն գիշերը տեղացած ձյան բարակ շերտը:

Դեռ երկու տարի առաջ են ասֆալտապատել Ագարակի ճանապարհը: Այն ժամանակ, ըստ ուժանիսցիների, խոսք կար, որ կասֆալտապատվի նաեւ ճանապարհի մինչեւ Ուժանիս ընկած հատվածը, սակայն մինչեւ հիմա չի արվել: Հատկապես ձմռան ամիսներին դժվարանցանե-

լի է Եղվարդից Ուժանիս տանող ճանապարհահատվածը, որտեղ անցյալ տարվա նոյեմբերից կան նաեւ փլուզված եւ փլուզման վտանգի տակ գտնվող հատվածներ: Տեղացիները կարծում են, որ անձրևներից հետո նորից հնարավոր են փլուզումներ: Նման վտանգի տակ է նաեւ ներկայիս գյուղապետարանի շենքը (լուսանկարում), անմխիթար վիճակում են դահլիճը եւ արարողությունների սրահը:

Շարունակությունը՝ էջ 4

## Ձայն բարբառո հանապարի

Իլյան լռում է, Հրաչը՝ նույնպես

### ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՕՐԱԿԱՐԳ

«Սյունյաց երկիրը» 2012թ. հունվարի 13-ի համարում (N1) տպագրել էր հատվածներ ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բազարյանի՝ «Ա1+» հեռուստաընկերությանը տված հարցազրույցից: Նախկին վարչապետը սենսացիոն հայտարարություն էր արել հանրապետության մետաղական հանքարդյունաբերության մասին խոսելիս՝ «...Միայն 20%-ն է ոչ ստվեր, այսինքն, երբ որ հանքերն ասում են՝ մեկ տոննա ենք արդյունահանել, իրականում հինգ տոննա են արդյունահանել: Խոսքը վերաբերում է այդտեղ գտնվող բոլոր գործարաններին՝ ինչպես հին, որոնք են Քաջարանը, Ագարակը եւ Կապանը, այնպես էլ նոր... 2 մլրդ դոլարի շրջանառությունը ներկայացվում է ընդամենը 400 մլն դոլար»:

Վերջին տարիներին, նաեւ մեր թերթում, բազմաթիվ հոդվածներ են հրատարակվել մարզի հանքարդյունաբերության երեք ձեռնարկությունում տեղ գտած բազմաթիվ թերությունների եւ աղավաղումների մասին: Այդպիսի մեղադրանք,

սակայն, երբեք չէր հնչել ընկած ձեռնարկությունների հասցեին: Եվ, որքան էլ տարօրինակ է, հանքարդյունաբերական ձեռնարկությունների սեփականատերերն ու ղեկավարներն առայսօր չեն արձագանքել նախկին վարչապետի՝ նախադեպը չունեցող եւ արտառոց հայտարարությանը: Սակայն Սյունիքում, չնայած անբացատրելի այդ լռությանը, նախկին վարչապետի հայտարարության նկատմամբ հետաքրքրությունը չի թուլանում: Հատկապես կապանցիները, ովքեր «Դիմո գոլդ մայնինգ քանիքի» ՓԲԸ-ի վարչական տնօրեն Հրաչի էլույթներից հետո սկսել են ավելի հաճախակի հիշել Ավարայրն ու Վարդան Մամիկոնյանին, ուզում են իմանալ՝ իսկապես՝ այդ ընկերություններում 80%-ը ստվեր է, թե՞ Հրանտ Բազարյանը զրպարտել է: Իմիջիայլոց, Ավարայրով Հայաստան եկողներն ուզում էին մի քանի ատրուշան կառուցել մեզ մոտ, իսկ Կուրբաթլուի ոստիկանապետ Նադիրը 1980-ականների վերջին երբեմն-երբեմն ոչխար էր գողանում Սյունիքի սահմանամերձ գյուղերից: Երկու դեպքում էլ չհանդուրժեցինք եւ ոտքի ելանք:



«ԴՊՍՔ» ՓԲԸ տնօրեն  
Իլյա Քարկովը

«ԴՊՍՔ» ՓԲԸ վարչական  
տնօրեն Հրաչ Զաբարյանը

Հիմա խոսքը մարզի հանքարդյունաբերության 80%-ի մասին է, եթե, իհարկե, նախկին վարչապետի հայտարարությունը չի հերքվում: Եվ, ուրեմն, ինչպես Իլյա Քարկովն ու Հրաչը, այնպես էլ Մաքսիմ Հակոբյանն ու Սերգեյ Պոլովինկինը Հրանտ Բազարյանի հայտարարության առթիվ խոսք պիտի ասեն: Համեմայնդեպս՝ այդպես են կարծում մեր ընթերցողների շատերը:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Շարունակությունը՝ էջ 3

# Հոգսեր դեռ կլինեն...

## ՋՍԵՆՈՒՅԻՆ ՊԱՅՄԱՆՈՒԹՅՈՒՆ

«Այունյաց երկիրը» շարունակում է իր տեսադաշտում պահել մարզի ճանապարհների (միջպետական, հանրապետական, մարզային) ձմեռային սպասարկման խնդիրները: Մեր թերթի՝ թեմային առնչվող նախորդ հրատարակման մեջ «ՌՎԷՄ» ՍՊԸ-ի տարածքում պատասխանատու միջպետական մայրուղու սպասարկման համար («Այունյաց երկիր», 10 նոյեմբերի 2011թ., N19), նշվել էր այն մասին, որ հոկտեմբերի 27-ին տեղացած առատ ձյունն անակնկալներ էր մատուցել, հատկապես մարզի տարածքով անցնող միջպետական մայրուղու Սիսիանի հատվածում:

Այդ ժամանակվանից ի վեր գրանցվել էր անձյուն եղանակ, եւ սիսիանի 20-ից հետո եղան ձյան տեսքով տեղումներ, երբեմն էլ՝ առատ: Եվ, բնականաբար, ճանապարհաշինարարների համար հոգսաշատ օրեր սկսվեցին: Եթե հոկտեմբերի 27-ի տեղացած ձյունն անակնկալ էր եւ հանկարծակիի բերեց ճանապարհաշինարարներին (նաեւ նշեց, որ ճանապարհների ձմեռային պահպանությունը սկսվում է նոյեմբերի 16-ից), ապա ձմռան կեսին տեղացած ձյանը պիտի պատրաստ լինեին մարզի ճանապարհները սպասարկողները, բայց...

Նախապես ասենք, որ 2012-ի պետությունը մարզի ճանապարհների ձմեռային սպասարկման համար հատկացվել է 105 մլն դրամ, այնքան, որքան նախորդ տարի: Մենք փորձեցինք մարզի ճանապարհաշինարարական ձեռնարկություններին («Ոսմար» ՄՊԸ, «Մեղրու ճՇՇ» ԲԲԸ, «Սիսիանի ճանշին» ՄՊԸ, «Կապանի ճՇՇ» ՄՊԸ) տեղեկանալ, թե տեղումնաշատ օրերին եւ դրանց հաջորդած ժամանակահատվածում կարողացան արդյոք ճանապարհները երթելու պահել:

Ըստ մարզպետարանի տրամադրած «Այունյաց մարզի ճանապարհաշինարարական ձեռնարկությունների կողմից սպասարկվող ճանապարհահատվածների մասին» տեղեկանքի՝ «Ոսմար» ՄՊԸ-ն սպասարկում է 85.5կմ միջպետական (Գորիս-Սիսիան հատված-16.5, Գորիս-Կապան հատված (Չայգամի)-



**ԱԶՏԱ ՎԱՍՊՈՒՅԱՆ**  
«Մեղրու ճՇՇ» ԲԲԸ փնտրեն



**ԱՐԱՐԱՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**  
«Կապանի ճՇՇ» ՄՊԸ փնտրեն



**ԱՐԱՐԻՍ ՍԱՐԳՏԻՐՈՅԱՆ**  
«Ոսմար» ՄՊԸ փնտրեն



**ՀՐՈՎ ԳԱՐՄԻՐԵՅԱՆ**  
«Սիսիանի ճանշին» ՄՊԸ փնտրեն

40.5կմ, Գորիս-ԼՂՀ սահման-28.5կմ), 44.6կմ հանրապետական, 129.2կմ մարզային նշանակության ճանապարհներ: Ինչպես մեզ տեղեկաց-



Ձմեռը Գիբազի լեռնանցքում

րեց ընկերության տնօրեն Արթուր Սարտիրոսյանը, ձեռնարկությունը տեխնիկական զինվածության խնդիր չունի, պետությունը ձմեռային սպասարկման համար մարզին հատկացված գումարից իրենց բաժին է հասել 22 մլն դրամ, կուտակել են 60 տոննա աղ, 400-500 խորանարդ մետր ավազ: Չնայած այս հավաստիացումներին՝ Կապան-Գորիս մայրուղով երթելու վարորդները դժվարությունների են հանդիպում Բարձրավանի խաչմերուկից մինչև Չայգամի ընկած հատվածում: Այնտեղ, որտեղ արեւի ճառագայթները չեն հասնում, սառցակալած է մնում:

Ինչպես մեզ փոխանցեցին «Մեղրու ճանապարհների շինարարության եւ շահագործման ձեռնարկություն» ԲԲ ընկերությունից, փետրվարի վերջին եւ հունվարի սկզբին ձնաբուքեր են եղել, բայց ձնամառտի նետված տեխնիկայի չնորոգված հնարավոր է եղել ճանապարհը բանուկ պահել: Ձեռնարկությունը սպասարկում է 104կմ (Մ-2 Երեւան-Գորիս-Մեղրի եւ Մ-17 Կապան-Ծավ-Մեղրի) միջպետական, 59.9կմ հանրապետական, 50.8կմ մարզային նշանակության ճանապարհները: Մեր թերթի էջերում քանիցս ներկայացրել ենք, թե այս կազմակերպությունը որքան լրջությամբ է իրականացնում իրեն վստահված ճանապարհների ձմեռային սպասարկումը, եւ դա այն դեպքում, երբ Գիբազի լեռնանցքում եղանակը կարող է անակնկալներ մատուցել (ձնաբուք եւ վատ տեսանելիություն) հոկտեմբերից մինչև ապրի-

ամիսը ներառյալ: Ձեռնարկության տնօրեն Ազատ Գասպարյանը մայրաքաղաքում էր, ով մեզ հայտնեց, որ ընկերությունը հարթող է ճանաչվել մրցույթում եւ իրավունք ստացել իրականացնել Նոնաձորի կայանից մինչև Նոնաձոր 2246 մետր ճանապարհահատվածի հողային պատահալ վերականգնման աշխատանքներ, որոնք կսկսվեն մարտից: «Սիսիանի ճանշին» ՄՊ ընկերությունը սպասարկում է 66.5կմ միջպետական, 26կմ հանրապետական, 155կմ մարզային ճանապարհներ: Ընկերության տնօրեն Հրաչ Գաբրիելյանի տեղեկացմամբ՝ կուտակել են 30տ աղ, 1500 խորանարդ մետր ավազ, նաեւ հայտնեց, որ ձյուն տեղացած գիշերներին տեխնիկան աշխատել է, բայց հո վարորդներն իրենց կաշվի վրա զգում են Գոռաքից մինչև Սիսիանի դարպասներ ընկած ճանապարհահատվածի հարուցած դժվարությունները:

Երբ աչքի եւ անցկացնում վերը նշված տեղեկանքը, ակնհայտ է դառնում, որ ամենաերկար ճանապարհների (331.9) ձմեռային սպասարկումը բաժին է հասել «Կապանի ճՇՇ» ՄՊ ընկերությանը (92.7կմ միջպետական՝ Չայգամի-Քաջարան-51.9կմ, Կապան-Շիշկերտ հատված-40.8կմ, 41կմ հանրապետական, 198.2կմ մարզային ճանապարհներ): Կազմակերպությունը ջանում է հնարավորինս բաց պահել ճանապարհները, այդ թվում՝ դեպի համայնքներ տանողները:

### ՎԱՐՐԱՍ ՕՐԲԵՅԱՆ

## Ուրանի հարցը շարունակում է անհանգստացնել կապանցիներին

### ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

«Հայ-ռուսական լեռնահանքային կազմակերպություն» ՓԲԸ-ի պատվերով «Աբվան» ՄՊԸ-ն 2011թ. հոկտեմբեր ամսից վերսկսել է Սյունիքի մարզում ուրանի հանքավայրերի որոնողահետախուզական աշխատանքները, որը հանրուկային շրջանում վերստին տագնապ է առաջացրել: Տեղական ինը 34-ների բաց նամակը՝ ուղղված ՀՀ նախագահին, նպատակ ունի եւս մեկ անգամ եւ վերջնականապես անդրադառնալ այս խնդրին եւ տալ հանրությանը բավարարող պատասխան: Հանրության միակարծությունն անտեսվելու դեպքում 34-ները ստիպված են առաջիկայում վերսկսել բողոքի ակցիաները:

**Հարգանքով՝ Արմեն Փարսադանյան, «Կայուն զարգացում» ՀՀ նախագահ**

**Ք.Կապան, փ. Մելիք-Սփեփանյան 14/26, հեռ.՝ 094 42 59 42**

### Հայաստանի Հանրապետության Նախագահ պարոն Սերժ Սարգսյանին

Մեծարգո պարոն նախագահ Արդեն մի քանի տարի է, ինչ, կառավարության կողմից հանքարդյունաբերությունը տնտեսական զարգացման գերակա ճյուղ ընտրվելու արդյունքում, Սյունիքի մարզում համատարած սկսվել են տարատեսակ հանքավայրերի որոնողահետախուզական աշխատանքներ: Հանրության մտահոգությունը՝ ապահով շրջակա միջավայրում ապրելու մասին, համատարած քննարկման առարկա դարձավ ուրանի հանքավայրի որոնողահետախուզական աշխատանքները սկսվելուն պես, ինչը հետին պլան մղեց նույնիսկ սոցիալական խնդիրները:

Ի սկզբանե, անտեսելով հարցի չափազանց զգայուն լինելը, կառավարությունը ընդունեց որոշումներ, որոնց մասին, որքան էլ զարմանալի է, հանրությունը տեղեկացավ համացանցից:

Հանրության դիրքորոշումը

հստակ պատկերացնելու նպատակով տեղական հասարակական կառույցները կազմակերպել են ստորագրահավաք, որի մասնակիցներին հնարավորություն է տրվել հարցի վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտել կողմ, դեմ, ձեռնպահ պատասխաններով: Տեղեկացնում ենք Ձեզ, որ ստորագրահավաքին մասնակցել է 13.850/տասներեք հազար ութ հարյուր հիսուն/ քաղաքացի եւ մասնակիցների 99%-ից ավելին դեմ է արտահայտվել Հայաստանում ուրանի հանքերի հնարավոր շահագործմանը: Ստորագրահավաքի արդյունքները 2010թ. դեկտեմբերին ներկայացվել է ՀՀ կառավարությանը: Հայտնում ենք մեր վրդովմունքը Սյունիքի մարզում ուրանի հանքերի որոնողահետախուզական աշխատանքների վերսկսման առիթով, ինչը տարածաշրջանում վերստին տագնապ է առաջացրել:

Ստորագրահավաքի արդյունքների անտեսումը կսպառի իշխանությունների հանդեպ վստահությունը, եւ այն կընկալվի մարտահրավեր՝ ուղղված հանրությանը եւ հասարակական կառույցներին:

Մենք հաշվի ենք առնում միջազգային էներգետիկ ոլորտում ընթացող զարգացումներն ու ներ-

գակիրների օրեցօր աճող պահանջարկը, սակայն նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության չափերը, ուրանի հանքի շահագործման ազդեցությունը շրջակա միջավայրի եւ կյանքի բնականոն զարգացման վրա, այն համարում ենք ազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք: Հարկ ենք համարում նշել նաեւ, որ հասարակական կառույցները ոչ նպատակահարմար են համարում Սյունիքում հանքարդյունաբերության զարգացման քաղաքականությունը, քանի որ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին եւ նրանց սերունդներին պատկանող բնական պաշարներից օգտվում են միայն որոշ անհատներ: Շարքային քաղաքացին գտնվելով երազածից դուրս՝ անընդունելի է համարում ապականված միջավայրում, չքավորության մեջ ապրելու պայմանները:

Հիմք ընդունելով հանրության միակարծությունը, պահանջում ենք դադարեցնել ուրանի հանքավայրի որոնողահետախուզական աշխատանքները եւ չեղյալ համարել ոլորտին առնչվող բոլոր իրավական ակտերը:

25.01.2012թ.

## Լուրեր

Փետրվարի 4-ին Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում մեծարեցին ՀՀ պաշտպանության նախարարության մարտական պատրաստության նախկին պետ, այժմ՝ նախարարի խորհրդակց, գեներալ-լեյտենանտ Սուրազ Սարգսյանին եւ ՀՀ ազգային բանակի հրթիռահրետանային զորքերի նախկին պետ, այժմ՝ ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայական հանձնաժողովի անդամ, գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանին: Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը ներկայացրեց նրանց ավանդը մասնավորապես մեր երկրի հարավ-արեւելյան սահմանների պաշտպանության գործում եւ ՀՀ զինված ուժերի կայացմանը նպաստելու ու ՀՀ բանակի կազմավորման 20-ամյակի առթիվ նրանց արժանացրեց «Պատվավոր սյունեցի» կոչման: Բարձրատիճան սպաները, երախտագիտություն հայտնելով արժանացրած պատվի համար, պատմեցին, թե ինչպես զինվորագրվեցին նորաստեղծ ազգային բանակին, ներկայացրին նաեւ իրենց ղեկավարած կառույցների կայացման ընթացքը: Բանակաշինությանը նպաստած մի խումբ մարդկանց հանձնվեցին ՀՀ պաշտպանության նախարարության պատվոգրեր, գերատեսչական մեդալներ եւ հայոց բանակի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հուշանշաններ: Մեծարման երեկոյի մասնակիցների համար տրվեց համերգ: Պատվոգրերի, գերատեսչական մեդալների հանձնման արարողություններ տեղի ունեցան մարզի մյուս քաղաքներում եւս:

ՀՀ նախագահի 2012թ. հունվարի 23-ի «ՀՀ շքանշաններով եւ մեդալներով պարգևատրելու մասին» հրամանագրով ազատամարտիկ (պահեստի գնդապետ) Աշոտ Հրանտի Սինսայանը (Սիսիան) պարգևատրվել է 2-րդ աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով: Ինչպես նշված է հրամանագրում, նա այդ պարգևի արժանացել է «ՀՀ զինված ուժերի ստեղծման 20-րդ տարեդարձի կապակցությամբ, բանակաշինության գործում մատուցած նշանակալի ծառայությունների, ինչպես նաեւ հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած խիզախության եւ անձնվիրության համար»:

Փետրվարի 12-ին Խնձորեսկ, Վարդավազ (Վերին Գյողաքլու), Արծվանիկ եւ Կուրիս գյուղերում տեղի ունեցան ՏԻՄ ընտրություններ՝ առաջին երեք համայնքում գյուղապետի եւ ավագանու, իսկ Կուրիսում ավագանու ընտրություններ: Խնձորեսկի, Արծվանիկի, Վարդավազի գործող գյուղապետեր Սերյոժա Հայրապետյանը, Անուշավան Հարությունյանը եւ Գարեգին Կոստանյանը, թեեւ երեք համայնքում էլ ստեղծվել էր մրցակցության պատրաստ, ընտրվեցին իրենց նախկին պաշտոններում:

Փետրվարի 8-ին ձերբակալվել է ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» ՔԿԳ պետի տեղակալ Նարեկ Հարությունյանը: «Առաջին լրատվականի» տեղեկություններով՝ նա մեղադրվում է առանձնապես խոշոր չափի կաշառք վերցնելու մեջ:

# Իրավաքաղաքական վերլուծություն. ՀՀ կառավարության N627-Ն որոշումը եւ ՀՀ սահմանադրությունը

ՀԱԿԱՏԱՄԱՐՏ ՔԱԶԱՐԱՆ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ



ՍԱԼԿ ԹԵԼՈՒՅՑ

Իրավագետ

«Սյունյաց երկիր» թերթը պարբերաբար անդրադառնում է ՀՀ կառավարության 2011թ. N627-Ն որոշմանը, որով Սյունիքի մարզի մի շարք համայնքների՝ Քաջարան, Արծվամիկ եւ այլն, պատկանող հողատարածքները հանրային բացառիկ գերակա շահ ճանաչելու նկատառումով վերցվում եւ տրվում են «Ջանգելուրի ՊՄԿ» ՓԲԸ-ին՝ դրանք հանքարդյունաբերական նպատակով շահագործելու համար: Արտաքուստ կարող է թվալ, թե խնդիրը սոսկ սովորական տնտեսական նշանակություն ունի, մինչդեռ, փոքր-ինչ խորանվազ լինելու դեպքում, դժվար է նկատել, որ այն ոչ միայն տնտեսական, այլեւ, ավելի մեծ չափով, իրավաքաղաքական բախտորոշ նշանակություն ունեցող հարց է՝ մասնավորապես մեր փոքրիկ հան-

րապետության առկա իրողությունները հաշվի առնելով: Ընդհանրապես խնդիրը ռազմավարական տեսակետից մեզ վաղուց է հետաքրքրում ու մտահոգում: Նկատի ունենք մասնավորապես դրա սոցիալական հնարավոր աղետաբեր հետեւանքները մեր փոքրիկ, աշխարհաքաղաքական ոչ այնքան բարենպաստ պայմաններում գտնվող հանրապետության, նաեւ երկրի ներկայի ու ապագայի, մեր ազգային անվտանգության համար: Ուստի քանիցս անդրադարձել ենք դրա հետ կապված մի շարք հիմնախնդիրների (տես՝ Մ.Թելուց, Աշխատությունների ժողովածու, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան 2011, Մ.Թելուց, Հայերի ցեղասպանությունը Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան Թուրքիայում եւ միջազգային իրավունքը: Պատմություն եւ արդիականություն. «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան 2011 եւ ուրիշ.): Խնդիրը սոսկ հողերն օրինական կամ անօրինական ճանապարհով վերցնելու կամ դրանց նշանակությունը փոխելու մեջ չէ, այլ հանրապետության ընդերքի հարստությունը ոչ ճիշտ օգտագործելու մեջ: ՀՀ նախագահը քանիցս տարբեր առիթներով նշել է, որ, ի տարբերություն նավթով հարուստ Ադրբեյջանի, Հայաստանը հարուստ չէ՝ ամեն անգամ շրջանցելով հարցը՝ թե ու՞ր է գնում մեր փոքրիկ, բայց օգտակար համաժողովրդով՝ պրինսիպ, ոսկի, մոլիբդեն եւ այլն, հարուստ երկրի (ըստ որում՝ դրանցով Սյունիքն ամենահարուստն է ՀՀ-ում, բայց սոցիալապես, տնտեսապես ամենաաղքատ-

ներից մեկը) ունեցվածքը, ինչո՞ւ են դրանք որպես հումք տարվում օտար շուկաներ եւ դրանցից ստացված միջոցները՝ դաշնային, եվրոպական հիմնականում լցվում մի քանի հոգու գրպան՝ տեղում ապրանքային արտադրություն կազմակերպելու փոխարեն, որում կընդգրկվեին մեր բազմաթիվ գործազուրկները, մասնավորապես՝ արտագաղթող երիտասարդությունը (այդ էլ մի շարք այլ հիմնախնդիրների մասին ավելի մանրամասն տես՝ Մ.Թելուց, Աշխատությունների ժողովածու. մասնավորապես՝ ՀՀ նախագահին ուղղված՝ 24.04.2010թ. թվագրությամբ, մեր նամակ-առաջարկությունները): Ընթերցողին շատ չծանձրացնելու համար նշենք, որ չնայած «ՀՀ ընդերքի մասին» օրենսգրքի համաձայն (հոդվ. 4) ՀՀ-ում ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է եւ այն օտարման ենթակա չէ. սակայն ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ այդ «բացառիկ սեփականությունը» հիմնականում, ըստ ստացված շահույթի բաշխման չափի, օգտագործվում է մի քանի անհատների կողմից ու լցվում նրանց գրպանը (իհարկե, այդ մարդկանց մոտ կուտակվող հարստության համեմատ մի աննշան բաժին էլ մտծելով պետական բյուջե): Երկրի ներկայի, ապագայի մասին շատ թե քիչ մտախոգ պետական կառույցը (համենայնդեպս այդպես պետք է լինի)՝ ԱԺ-ն, վաղուց պետք է հիշատակված օրենքում մի փոքր լրացում կատարեր այն մասին, որ՝ «ՀՀ-ում ընդերքը՝ օգտակար հանա-

ծներով, համարվում է պետության բացառիկ սեփականությունը, այն օտարման ենթակա չէ, ինչպես նաեւ չի կարող լրիվ կամ մասնակիորեն վարձակալությամբ կամ այլ նպատակով շահագործման, օգտագործման տրվել առանձին անհատների կամ ոչ պետական իրավաբանական անձանց»: Ընդերքից ստացվող ամբողջ շահույթը պետք է մտնի պետական բյուջե եւ ամբողջությամբ օգտագործվի հասարակության եւ պետության կարիքների համար: Սա սոցիալիզմի կամ կոմունիզմի բարձր չէ, այլ մեր պետության, ազգային անվտանգության շահերից. առողջ բանականությունից բխող պահանջ (նույնիսկ հայ միջնադարյան օրենսդիրները՝ Մխիթար Գոշ, Սմբատ Սպարապետ, այդպես էին մոտենում հարցին): Այս փոքրիկ երկրի ընդերքը (նաեւ մակերեսային), մինչդեռ, հանուն անհատական շահի անխիղճ թալանի է ենթարկվում՝ երկիրն ավելի ու ավելի խորը մխրճելով սոցիալական եկոզադուրացման ճահճի մեջ: Այս եւ բազմաթիվ այլ բացասական երեւույթներ ու հատկապես զանգվածային արտագաղթը՝ նաեւ այսօր շարունակվող, խորացող սոցիալ-տնտեսական, գույքային բեւեռացումը, իսկական աղետի են հասցրել երկիրը: Եվ այն աստիճան, որ նույնիսկ մեծամուկ Շառլ Ազնավուրը՝ Շվեյցարիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանը, մեզանում տեղի ունեցող գործընթացները ոչ առանց հիմքի որակում է «երկրորդ ցեղասպանություն» («Երկրորդ անգամ է հայ ժողովուրդը մահա-

Շարունակությունը էջ 9

## Քանի դեռ սեփականության եւ իշխանության կրողները նույն մարդիկ են

ՆԱԽԸՆՏՐՈՒՄ ԻՍՏԱՅԻՆ ՍՅՈՒՆԻՔԻՑ

Սկիզբը էջ 1

դուտ, որ ոչ մի պարագայում թույլ չի տա (մեծամասնական ընտրակարգը վերացնելուց հետո անգամ) վերջնականապես առողջացնել մեր ընտրական կարգը: Դա սեփականության եւ իշխանության մեկտեղված (միահյուսված) անբնական ու մերժելի վիճակն է, որն էլ եղել ու մնում է գործող քրեաօլիգարխիկ համակարգի, կոռուպցիայի եւ պրոտեկցիայի ստնտուն: Այնպես որ՝ չի կարելի հույս կապել առաջիկա խորհրդարանական ընտրություններին եւ ապագա խորհրդարանի հետ, քանի դեռ սեփականության եւ իշխանության կրողները նույն մարդիկ են կամ նույն կլանները, քանի դեռ հայաստանյան քաղաքական գրեթե բոլոր ուժերը, ազգի եւ պետության շահերից առաջ ունեն այլ շահ, այլ գերխնդիր՝ պահել (պաշտպանել) կուսակցության լիդերի (լիդերների ու վերնախավի) անձնական ունեցվածքը: Ի դեպ, հայաստանյան իրականությունը քանիցս արդեն ապացուցել է՝ իր սեփականության, իր ունեցվածքի պահպանությամբ մտահոգ որեւէ իշխանավոր (որեւէ պատգամավորական խմբակցություն անգամ) չի կարող դուրս գալ սեփական կաղապարից եւ զբաղվել պետական ու ազգային շահերի պաշտպանությամբ: Այդ պարա-

դքսն ավելի ցայտուն է մեր բիրդան օլիգարխիների պարագայում: Դատեցք ինքներդ՝ օլիգարխը նախելառաջ բիզնեսմեն է, իսկ բիզնեսմենի զլխավոր եւ սրբազան նպատակը (տեսականորեն եւ գործնականում, շահույթ, գերշահույթ ստանալն է): Այսինքն՝ օլիգարխն ունի իր հաստատուն նպատակը, իր շահը, որի մեջ չի կարող մտնել պետության շահերի պաշտպանությունը (եթե անգամ շատ ցանկանա): Ուրեմն եւ՝ ծիծաղելի է խոսել-հավաստիացնել, որ առաջիկա ընտրությունները նախորդ ընտրություններից լավն են լինելու: Առավել ծիծաղելի ու ողորմելի են այն պետական ու քաղաքական գործիչները, ովքեր ասում են՝ նոր խորհրդարանն ավելի լավը կլինի, քան՝ նախորդը: Քաղաքականությունն ու բիզնեսն իրարից տարանջատելու սահմանադրական նորմը, եթե հավատալու լինենք ՀՀ նախագահի հավատարմացումներին, այս անգամ կյանքի է կոչվելու, ինչը կողոզուները: Մնում է տեսնել, թե ինչպես է իրականությունում դառնում երկրի հիմնական օրենքի այդ դրույթը: ...Հիմա Սյունիքի N37 եւ N38 ընտրատարածքների համար պատգամավորության բազմաթիվ հավանական թեկնածուների անուններ են տրվում-շրջանառվում, իսկ մենք ջանում ենք ապացուցել, թե նրանցից ով ավելի լավը կլինի: Իրականում, մինչդեռ, մեր նման ռեալիզման հերթական անգամ խոսում է մեր իսկ ծիծաղելի, մեր իսկ ողորմելի, մեր իսկ թշվառ վիճակի մասին: Իսկապես, ի՞նչ ասել է լավ, խելոք, գրագետ պատգամավոր (պատգամավորացու), երբ ամեն ինչի որոշողն ու ուղղորդողն օլիգարխիկ համակարգի տիտաններն են: Ի՞նչ ասել է լավ, խելոք, գրագետ պատգամավոր (պատգամավորացու), երբ լավ, խելոք, գրագետ պատգամավորի պահանջարկ առհասարակ մեր

խորհրդարանում ու երկրում չկա: Ի՞նչ ասել է լավ, խելոք, գրագետ պատգամավոր, երբ այդ պատգամավորը (պատգամավորացուն) բանակային ծառայությունից փախած սովորական «նիգողմիկ է» (չնայած «նիգողմիկների» մի ամբողջ բույլ էլ կառավարությունում է թաքնվել եւ այնտեղից մեզ դեկավարում է): Կամ՝ եթե տարիներ շարունակ Սյունիքից Ազգային ժողովում պատգամավոր չի եղել, եթե տարիներ շարունակ Սյունիքի շահերը, պորբլեմները, մտահոգությունները խորհրդարանում ներկայացնող գոնե մեկ պատգամավոր չենք ունեցել, արժե՞՞ այսօր սեւեռվել հարցի վրա, թե մեր երկու ընտրատարածքում ովքեր են առաջադրվելու, թե կուսակցությունների համամասնական ցուցակներում Սյունիքից ովքեր են լինելու: Թող, օրինակ, N38 ընտրատարածքում ընտրվի Վահեն (հերթական անգամ), կամ Գերասիմ Ավարեղյանը (նախկին գյուղնախարար), կամ կապանցի-մեղրեցի մի անազոնուհի, ի՞նչ տարբերություն... Թող N37-ում ընտրվի Ալեքսանդր Սարգսյանը (Սաշիկը), կամ սիսիանցի Թաթուլ Հակոբյանը (մեր կողմից հարգված), կամ գորիսեցի ինչ-որ մի «գրագետ» երիտասարդ, կամ սիսիանցի մի տիկին՝ արիական ծագումով... Ի՞նչ տարբերություն: Միայն Վահեն չընտրվելը (հայտնի են անհայտ հավակնորդների շարքում) գուցե եւս փոստամբ առաջացնի մարզի երեխաների շրջանում. մարդը Ձմեռ պապի պարտաճանաչությամբ ամեն Նոր տարվա առիթով փոքրիկներին տոպրակ էր ուղարկում՝ համ էլ գուցե քվեարկությունից առաջ (ըստ ընտրողների շատերի) Կապանի ու Մեղրու ընտրողներին մի քանի արծաթ շարտի, մի քանի շենքի տանիք կամ կոյուղի նորոգի: Այնպես որ (կրկնում ենք)՝ առաջիկա խորհրդարանական ընտրությունները, գալիք խորհրդարանը կապ

չունեն (եւ չեն կարող կապ ունենալ) հանրապետության, ազգի հիմնախնդիրների, մարդկանց մտահոգությունների հետ, եթե... Եվ ուրեմն՝ թող մեր կուսակցությունները, մեր քաղաքական գործիչներն ու պատգամավորության թեկնածուները հնարավորինս խույս տան (հատկապես նախընտրական այս շրջանում) երկրի, ազգի, հայոց պետության մասին խոսելուց, քանզի նման ամեն մի խոսակցություն արդարացիորեն կհամարվի շաղկապանք ու փարիսեցիկություն: Հատկապես Սյունիքում նման խոսակցությունները պարզ փաճախություն կհամարվեն, քանի որ նախորդ ընտրություններից հետո քաղաքական եւ ոչ մի ուժ չի բարեհաճել զբաղվել Սյունիքի հիմնախնդիրներով (հարուցած դժվարություններն ու խոչընդոտները, սերմանած այլաճակատությունները, սյունեցիների ծաղրելու պերմանենտ ակցիաները՝ մի կողմ): Մանավանդ որ քաղաքական ոչ մի ուժ (իշխանության մեջ եղած եւ գտնվող) 2007-ի եւ 2008-ի ընտրությունների առիթով մարզի ընտրողներին տված մեծադիր խոստումների մեծագույն մասը կյանքի չի կոչել: Ի՞նչ անել: Սատարել քաղաքական այն ուժերին, պատգամավորության այն թեկնածուներին (եթե կգտնվեն), ովքեր իրական եւ կոնկրետ քայլերով (ոչ թե խոսքով) ձգտում են (կծգտեն) սեփականությունն ու իշխանությունը տարանջատել միմյանցից, ինչը եւ (ի վերջո) կհանգեցնի համակարգային արմատական փոփոխությունների: Միայն այդպես կարելի է առաջիկա ընտրությունների լուրջ վերաբերվել, միայն այդպես կարելի է առաջիկա ընտրությունների ու մեր համապետական ու համազգային խնդիրների միջեւ աղերսներ գտնել, այլապես... ՍԱՍԿԵԼ ԱՆԵՔԱՆՅԱԼ

## Լուրեր

ՀՀ կառավարության որոշմամբ Սյունիքի մարզին, 2012թ. գարնան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար, հատկացվել է 2500տ ազոտական պարարտանյութ. մեկ պարկի արժեքը՝ 6000 դրամ: Ըստ Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանի՝ պարարտանյութը փետրվար-ապրիլ ամիսներին կտեղափոխվի մարզ, մինչեւ համայնքներ տեղափոխման վարձը մտնում է սահմանված 6000 դրամի մեջ: Համայնքներից ստացվել է պահանջարկը, ըստ այդմ էլ կկատարվեն հատկացումները, գումարները ներկայումս հավաքվում են:

ՀՀ կառավարությունը վառելիքի հարցում եւս կաջակցի գյուղացուն՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում: Մարզին հատկացված 300տ դիզվառելիքը (լիտրը՝ 350 դրամ) թեւ չի բավարարի գյուղական տնտեսությունների պահանջարկը, բայց որոշակի նպաստ կլինի հողի աշխատավորին: Մնում է արդարացի բաշխումը, ինչը սովորաբար մեզ չի հաջողվում:

Քաջարանի գյուղապետ Ռաֆիկ Աբայանին գրություն է հղել ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կ.Անդրեասյանը, ով ուշացումով նպատակ ունի պարզել կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N627-Ն որոշման նախապատրաստմանը Քաջարան գյուղական համայնքի բնակչության մասնակցության աստիճանը: Մարդու իրավունքների պաշտպանին հունվարի 27-ին հղած պատասխան նամակում Ռ.Աբայանը մասնավորապես գրել է. «Մենք կառավարության որոշման մասին իմացել ենք այն ընդունելուց հետո միայն՝ պատահաբար: Մեզ նույնիսկ պատշաճ ձևով չեն իրազեկել այդ մասին: Առայսօր մենք տեղիակ չենք, թե այդ որոշման նախապատրաստության ընթացքում ինչ փորձաքննություններ են իրականացվել գյուղի տարածքում՝ համայնքի բնակչության առողջության, շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության հարցերի վերաբերյալ: Սյունիքի մարզպետարանը նույնպես պատշաճ կարգով մեզ չի իրազեկել տեղի ունեցող գործընթացի, դրա հնարավոր հետեւանքների, գյուղացիների ապագայի վերաբերյալ»:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը հունվարի 26-ին կառավարության նիստում հանձնարարել էր ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանին՝ հանդիպել «Ժառանգություն» պատգամավորական խմբակցության հետ եւ քննարկել Քաջարան գյուղի խնդիրը: Վարչապետի այդ հանձնարարության համար հիմք է հանդիսացել խմբակցության նամակը կառավարությանը (տեքստը՝ մեր թերթի նախորդ համարում): Փետրվարի 2-ին «Ժառանգություն» պատգամավորական խմբակցության եւ նախարարի միջեւ տեղի է ունեցել նախատեսված հանդիպումը, որին մասնակցում էր նաեւ գյուղապետ Ռաֆիկ Աբայանը: Հանդիպման արդյունքների մասին պաշտոնական հարցազրույցում չի տարածվել:

# ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Ուժանիսի Սուրբ Զովհաննես եկեղեցին

**ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ** Այունյաց մարզի Ուժանիս գյուղը գտնվում է Կապան մարզկենտրոնից 12 կմ հյուսիս-արևելք: Գտնվում է Մեծ Զայքի Սյունիք աշխարհի Բաղք-Քաջունիք գավառի մի մասը: Առաջին անգամ հիշատակվում է Ստ. Օրբելյանի մոտ Կաթունիք, ապա Գ. Ալիշանի մոտ՝ Կաթունիք, այնուհետև՝ Կաթունիս, Կաթունիս անուններով: Ուժանիսում է գտնվում Ա. Չովհաննես միանավ եկեղեցին՝ կառուցված 1873 թվականին: Այսպես էլ ոչ հեռու գտնվում են Զին Ուժանիս, Սպիտակ աղբյուր եւ Շենարեղ բնակավայրերը: Գյուղից 1 կմ հյուսիս-արևելք գտնվում է Զանգին արտ կոչվող վայրը, որտեղ ընդարձակ գերեզմանատեղի կա, իսկ վերջինիս կենտրոնում՝ գեղեցիկ զարդաքանդակներով մարտահաջաբար, որն այժմ գտնվում է կիսավեր վիճակում: Ուժանիսում հյուրընկալվել է Բաֆֆին, նրա վկայությամբ այս գյուղից է եղել Դավիթ-Քելի գինակից Տեր-Պատարարը՝ «Ալշար երեցը»: Խորհրդային տարիներին այստեղ գործել է նաև Աղասի Խանջյանի անունը կրող կուլտուրա-ստույունը, եւ ամենեւին էլ պատահական չէ, որ ներկայումս գյուղապետի աշխատասենյակում կախված է Աղասի Խանջյանի՝ վերջին նախնական «դոֆինի» (Եղիշե Չարենցի բնութագրմամբ) մեծադիր դիմանկարը:

# Ուժանիս. կապանյան այդ գյուղը եւս՝ լինել-չլինելու երկընտրանքի առջեւ

Սկիզբը՝ էջ 1

Ուժանիս գյուղում այժմ հաշվառված է 43 ընտանիք, 108 բնակիչ, որից 17-ը՝ ժամանակավոր: Զաշվառված է 18 երեխա, որից գյուղում են բնակվում միայն երեքը: Մյուսները, դպրոց եւ աշխատատեղ չլինելու պատճառով, ընտանիքով տեղափոխվել են Կապան, որտեղ եւ ապրում են, աշխատում կամ դպրոց հաճախում: Վերջին տասը տարվա ընթացքում մոտավորապես 15 երիտասարդ ընտանիք այդ իսկ պատճառով Ուժանիսից տեղափոխվել է մոտակա Կապան եւ այլ քաղաքներ: Գյուղը 1831թ. ունեցել է 30 բնակիչ, 1897-ին՝ 444, 1926-ին՝ 378, 1959-ին՝ 206, 1979-ին՝ 109, 1989-ին՝ 114 բնակիչ:

Վերջին անգամ գյուղում հարսանիք է եղել յոթ տարի առաջ, իսկ 2000 թվականից առաջուր այստեղ գրանցվել է ընդամենը երեք ծնունդ: Այս փաստին հակառակ՝ մահացել է 15 մարդ: Այժմ այնտեղ ապրում են միայն գյուղապետ Էդիկ Բեգլարյանի երեք երեխան, որոնցից երկուսն ամեն օր, անցնելով 2 կմ ճանապարհ, հաճախում են հարեւան Եղվարդի դպրոց: «Դժվար չէ, - ասում են, - արդեն սովորել ենք»:

Ուժանիսի տարածքը կազմում է ընդամենը 1434 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հո-

ղեր՝ 433 հա, որից՝ վարելահող՝ 205 հա, խոտհարք՝ 6 հա, արոտ՝ 110 հա, այլ հողեր՝ 112 հա, անտառային հողեր՝ 950 հա:

Սահմանամերձ Ուժանիս գյուղը ունի բազում հիմնախնդիրներ, որոնք շտապ լուծում են պահանջում: Այս գյուղը կարող է մարզի իշխանությունների ուշադրության ու օգնությանը: Եթե այսպես շարունակվի, ապա մենք կկորցնենք սահմանային եւս մեկ գյուղ, այն էլ մոտակա 5-10 տարիների ընթացքում: Դա ուժանիսիցիների կարծիքն է նախեւառաջ:

Գյուղի հարակից տարածքում կա մոտավորապես 5 հեկտար ակադեմիական դաշտամաս, որը մինչ այժմ չի ակադեմիզացվել եւ վտանգ է ներկայացնում գյուղացիների համար: Այդ տարածքով է անցնում անասունների՝ դեպի արոտ տանող ճանապարհը: «Եկել, նայել են, - ասում են ուժանիսիցիները, - սակայն մինչեւ այժմ չեն ակադեմիզացվել»:

Խնդիրներից մեկն էլ կապված է ոռոգման համակարգի հետ: Ուժանիսում ոռոգման ջուր չկա, 3-րդ հեկտարային ջրատարը վաղուց չի գործում, առկա ջրային ռեսուրսներն էլ ամենաջրառատ տարիներին բավականացնում են ընդամենը 5 հա բանջարաբուստանային մշակաբույսեր ոռոգելու համար: Փաստորեն ուժանիսիցիները չեն կարող լիարժեք

հողագործությամբ զբաղվել, իսկ գյուղացու համար եկամտի աղբյուրներից մեկը համարվում է հողագործությունը:

Չմեռային ամիսներին Ուժանիսում տրանսպորտ չի աշխատում, պատճառը ճանապարհների դժվարանցանելիությունն է: Տարվա մյուս եղանակներին, շաբաթը երեք անգամ, Կապանից Ուժանիս երթուղային տրանսպորտ է աշխատում:


Բուժքույր ունեն, սակայն շտապ օգնության ծառայությունից օգտվելիս դժվարություններ են առաջանում, մանավանդ՝ ծննդից:

Վերջին 20 տարվա ընթացքում Ուժանիսում իրականացվել է ընդամենը մի քանի աննշանակ ծրագիր: Դրանք են՝ գյուղամիջյան ճանապարհների բարելավում, փոսուցում, գերեզմանոցի ցանկապատում՝ Կապանի զբաղվածության կենտրոնի «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրի միջոցներով, ինչպես նաև խմելու ջրագծի ներքին ցանցի մասնակի նորոգման աշխատանքներ: Քանի որ Ուժանիսում, ինչպես ասվեց, երեխաներ չկան, այդ պատճառով էլ «Վորդ Վիժնի» Կապանի տարածաշրջանային զարգացման ծրագրում այս գյուղը չի ընդգրկված:

Մարդիկ ծնունդ բնակարանների ցեռուցումն իրականացնում են փայտով, ենթաշրջանի գյուղերում



Արտյուր Բեգումյան  
Ուժանիսի գյուղապետ



ԿԿՄԻ ԲԵԳՈՒՄՅԱՆ  
Ուժանիսի գյուղապետ



Արտյուր Բեգումյան



Արտյուր Բեգումյան

**ՏՆՎԵԼ ԵՒ 1976թ. Ուժանիս գյուղում:** 1982-1991թթ. սովորել է Եղվարդի միջնակարգ դպրոցում, ապա ավարտել Կապանի N21 պրոֆտեխնիկական ուսումնարանը: 1994-1996 թթ. ծառայել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում: 2003-2007թթ. աշխատել է «Պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայություն» ՊՈԱԿ-ում՝ որպես ինժեներ: 2007թ. առաջուր Ուժանիսի համայնքի ղեկավարն է: Ամուսնացած է, ունի 3 զավակ: ԳՅԿ անդամ է:

մաճարակը կանխելու ուղղությամբ): Գյուղապետ Էդիկ Բեգլարյանը մտահոգ է. «Գյուղի ապագան երեխաներն են, երիտասարդները, առանց նրանց ի՞նչ ապագա, - ասում է, - ապա ուժանիսցուն բնորոշ լավատեսությամբ ավելացնում, - այս տարի Սյունիքի մարզպետի միջնորդությամբ 8 տոմս գործնի սերմացու հատկացվեց գյուղին՝ հետագայում մեկը երկուսի հարաբերությամբ վերադարձնելու պայմանով: Եվ այժմ 50 հեկտար աշխատանքային ունենք: Մեկ տոմս 300 կիլոգրամ էլ զարու սերմացու են ամվճար հատկացրել գյուղին»:

Սակայն այստեղ չեն հիշում, թե վերջին անգամ իշխանավորներից ով է գյուղ այցելել, խոսել համայնքի խնդիրներից, մտահոգվել, փորձել օգնել: Դժվարությամբ հիշում են ի վերջո՝ ճանապարհի փլուզման ժամանակ էր՝ եկան մարզպետարանից, խոստացան օգնել, բայց...

— Իսկ առաջնահերթ չե՞ն այն է, որ այժմ գյուղտեխնիկայի կարիք ունենք, հատկապես խոտհմծիչ մեքենայի, - գյուղացու հոգսերն է ներկայացնում 54-ամյա Էդիկ Սարգսյանը, - եւ բոլորն էլ համաձայնում են: — Չբաղվում են անասնապահությամբ ասում է նա, - տունը պահում ենք, բայց ապագան շատ մշուշոտ է:

— Առաջ՝ սովետական տարիներին, ավելի լավ էր, աշխատանք կար, աշխատում էինք՝ տունը պահում: Մեզ օգնություն է հարկավոր, - իր հոգսերով է կիսվում մեկ այլ ուժանիսցի՝ Կամո Բաղդասարյանը, ով ամբողջ կյանքն ապրել է իր սիրելի գյուղում եւ բացակայել է միայն Աֆղանստանում ծառայելու տարիներին, - դժգոհ են այս անտարբերությունից, - ասում է, - գյուղի ապագան վտանգված է: Չենք կարողանում աշխատել, այլ միայն պարտականություն ենք կատարում, աշխատելու համար որեւէ պայման չկա:

Ասում են ու ամիսսու իրար երեսի մայրս, կրկին գալով այն նույն տեղին, որտեղից սկսել էին՝ աշխատատեղ չկա, դպրոց չկա, երիտասարդները թողել են հեռավոր մեկ գյուղից, մինչդեռ... Մինչդեռ մարզում մարդիկ հանքեր ունեն, միլիոնավոր դոլարներ են դիզում, որով կարող են փրկել պատմական Կաթունիք-Ուժանիս գյուղի (եւ ոչ միայն նրա) ապագան, հույս պարզապես սահմանային գյուղի բնակիչներին: Մենք այսօր հպարտանում ենք մեր բանի հզորությամբ, սակայն արդեն որերորդ սահմանային գյուղն է, որ վերացման վտանգի տակ է, եւ դա կանխելու համար իշխանությունները քայլեր չեն ձեռնարկում, իսկ մեր գործարարներն էլ հպարտանում են երեւանում եւ մայրաքաղաքամերձ շրջաններում արած «բարեգործություններով»... Իսկ համայնքների խոշորացման ծրագրին գյուղապետ Էդիկ Բեգլարյանը կտրականապես դեմ է. «Այդպես ավելի կարագացվի սահմանային գյուղերի վերացումը»:

**ԱՐԱՎԻՆ ՆԱԿԱՍԱՐԳՅԱՆ**

## ՃԱԿԱՏԱՄԱՐՑ ՔԱԶԱՐԱՆ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ

# Իրավաքաղաքական վերլուծություն. ՀՀ կառավարության N627-Ն որոշումը եւ ՀՀ սահմանադրությունը

Սկզբը՝ էջ 3

նում՝ այս անգամ սեփական անկախ երկրում»): Այնպես որ՝ ցանկացած հիմնախնդիր այսօր պետք է դիտել ներքին եւ աշխարհաքաղաքական ռազմավարության կտրվածքով ու համակողմանի:

Իսկ այժմ՝ կառավարության N627-Ն որոշման մասին: Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար, ըստ ՀՀ սահմանադրության 31-րդ հոդվածի երրորդ պարբերության, կարող է կատարվել միայն բացառիկ գերակա հանրային շահի դեպքում: Նույնը սահմանում է խնդիրն ավելի մանրամասն կարգավորում է «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը: Հիմնախնդիրը պետք է դիտարկել ոչ միայն այդ, այլ նաեւ իրավական մի շարք այլ ակտերի («Տեղական ինքնակառավարման մասին» օրենք, «Տեղական հանրաքվեի մասին» օրենք եւ այլն), տեսանկյունից:

Ձուտ իրավական առումով՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (հոդված 4) մատնանշում է ութ դեպք, որոնք կարող են դրվել «հանրային գերակա շահ» հասկացության հիմքում: Ցավոք, այդ հոդվածում օրենքը չի օգտագործում նույն հոդվածի 1-ին մասում նշված «բացառիկ» բառը, սակայն մեր հիշատակած ութ դեպքի թվարկման հետ մեկտեղ օրենքը շատ հստակ նշում է, որ «գերակա հանրային շահ» ճանաչելու հիմք չի կարող հանդիսանալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջե լրացուցիչ եկամուտ մուտք անելու նպատակը, ինչը, ցավոք, իշխանությունների փաստարկներից մեկն է Քաջարան գյուղի պարագայում:

Կառավարության հիշատակված որոշման հիմնավորումներից՝ «ա-դ» կետեր, պարզ չէ, թե որն է «բացառիկ գերակա հանրային շահը», իսկ ներկայացված «հիմնավորումներով» ՀՀ ամբողջ բնակչությանը, բնակավայրերը, ցանկանալու դեպքում, կարելի է տեղական, տարիանել այլ վայրեր եւ ամբողջ ընդերքը հետազոտել, արտադրության ծավալները մեծացնել եւ այլն: Ըստ որում՝ համայնքներից պատկանող տարածքները վերցվում եւ տրվում են մասնավոր մի ձեռնարկության, որով եւ էապես կամ զգալի չափով խախտվում է համայնքի՝ գոյատեւման կամ նորմալ գոյատեւման կենսական իրավունքը: Կառավարության վերացական «հիմնավորումներից» կամ անհաջող սքողված «փաստարկներից»՝ «տնտեսական անվտանգության ապահովում», «զարգացում» եւ այլն, ակնհայտ է, որ այդ որոշման միակ նպատակը նշված ձեռնարկության շահույթների մեծացումն է, գերշահույթի ստացումը (կրակն ենք ընկել մեր անհազուրդ ախորժակով «բիզնեսմենների» ձեռքը. դա դեռ ոչինչ, մեզ, մեր երկիրն անխիղճ ձեռով կողոպտում եւ թալանում են «տարածաշրջանային զարգացման» վարդազույն հեռանկարներով, հետո էլ թալանածից մի քիչ «շարտում» մեզ՝ հպարտանալով, որ իբր բարեգործություն են անում):

Ըստ որում՝ հողերը վերցվում են ոչ թե պետության եւ հասարակության (ինչպես օրենքն է պահանջում), այլ սոսկ մի ձեռնարկության «կարիքների» համար: Այստեղ ակնհայտորեն բացակայում է «բացառիկ գերակա հանրային շահը»: Ընդհակառակը՝ «բացառիկ գերակա է» հիշատակված համայնքների լինելության գերխնդիրը, որը տվյալ դեպքում անտեսվում է (եթե այդ հողերը վերցվելին հանքավայրին մոտ ռազմական արդյունաբերությանը ծառայեցնելու նպատակով, օդանավակայանների կառուցման, թշնամու հնարավոր հարձակման դեպքում անվտանգության գոտիներ ստեղծելու, տարերային աղետները կանխելու համար կառուցումների համար, հասկանալի կլինեի, բայց այս դեպքում...):

Մյուս կողմից՝ բացի դրանից, որ առանձին քաղաքացիներ եւ տեղական ինքնակառավարման մարմիններ նման որոշումը կարող են վիճարկել դատարանում՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Տեղական հանրաքվեի մասին» օրենքները, նշված հարցը համայնքային կենսական նշանակություն ունեցող է եւ համայնքների ղեկավարները, մեր կարծիքով, պետք է որոշումներ կայացնեն՝ ավագանու հաստատմամբ, այդ հարցը տեղական հանրաքվեի դնելու եւ ըստ դրա խնդիրն իրավասու մարմինների՝ այդ թվում՝ դատական ատյաններ ներկայացնելու համար: Ձարմանում են, որ մարդպետարանը, որ կառավարության այդ որոշման իրագործողն է, կառավարությանը չի հուշում տեղական հանրաքվեի մասին: Դա հենց տեղական հանրաքվեի մասին: Դա հենց տեղական հանրաքվեի մասին: Ըստ որում՝ Սահմանադրության համաձայն, հատկապես տեղական հանրաքվեից հետո, տեղական ինքնակառավարման մարմինը, յուրաքանչյուր համայնքի ղեկավարություն կարող են դիմել նաեւ Սահմանադրական դատարան (ՀՀ սահմանադրություն, հոդ. 101, կ. 5)՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական կառավարման մարմինների նորմատիվ ակտերի (տվյալ դեպքում N627-Ն որոշումը)՝ սահմանադրականությունը վիճարկելու պահանջով:

Ցանկանում են նաեւ նշել, որ «Սյունյաց երկրում»՝ քննարկվող հարցով պարբերաբար տպագրվող նյութերից ակնհայտ է, որ կառավարության նշված որոշման իրականացումը բացասական հետեւանքներ կունենա այդ համայնքների՝ վերջին հաշվով ամբողջ մարզի ու հանրապետության համար: Ուստի ե՛լ միայն զարմանք է պատճառում երկրի բարձրաստիճան ղեկավարության կողմից հասարակության ու պետության համար «բացառիկ գերակա շահը» չտեսնելը: Ի դեպ, այն բավական լավ է ընկալել եւ բացատրել Քաջարան գյուղական համայնքի ղեկավար Ռաֆիկ Աբայանը՝ իր հայտարարության մեջ: Ուստի ե՛լ միայն «Սյունյաց երկիր» 13.01.2012 N1): Ավելի լավ փաստական եւ իրավական մեկնաբանություն չես կարող տալ: Պարզապես ինձ թվում է, որ մեր բարձրաստիճան ու տեղական մարզային ղեկավարությունը, ինչպես հայտնի կլինակարի («Կովկասի գերուհին») հայտնի հերոսներից մեկն է ասում՝

«Պետական եւ անձնական շահը վաղուց խառնել են իրար»:

Անշուշտ, հիմնահարցի առնչությամբ կան նաեւ այլ խոցելի տեղեր՝ շրջակա միջավայրի պահպանություն, էկոլոգիական փորձաքննություն եւ այլն, սակայն որքան էլ որ դրանք պարտադիր պայմաններ են, այնուամենայնիվ, չեն արժանացել կառավարության ակնհայտ է դարձնում ընդունված որոշման հարցում հապճեպությունը, հարցի համալիր ուսումնասիրման բացակայությունը:

«Սյունյաց երկիր» էջերից հայտնի է դառնում, որ համայնքների ղեկավարությունը եւ բնակչությունը դեմ են կառավարության այդ որոշմանը: Մնում է համայնքի բնակիչների կամքը՝ օրենքով սահմանված կարգով՝ տեղական հանրաքվեով արտահայտել եւ ձեռնարկել հետագա քայլերը (եթե, իհարկե, կառավարությունը մինչ այդ ողջամտություն չդրեցնորի եւ չվերացնի իր անիրավաչափ ու անհեռաշտ որոշումը):

Թեպետ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով՝ հոդվ. 5, մաս 2-րդ, կետ «Ձ», համայնքի սեփականության օտարման հարցերը տեղական հանրաքվեի առարկա չեն (հավանաբար այն բանի համար, որ դրանք համայնքային մարմինների բացառիկ իրավասությանն են վերաբերում), բայց կառավարությունը, չնայած դրան, իր N627-Ն որոշմամբ խախտել է համայնքի իրավունքը, որն, ի դեպ, նախատեսված է ոչ միայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, այլ նաեւ ՀՀ սահմանադրությամբ՝ հոդվ. 105, 105. 1., 107 (չմոռանա՞ց նաեւ, որ տեղական ինքնակառավարման մարմինները ժողովրդական ինքնիշխանության ինքնավարության մարմիններ են, եւ պետական մարմինների համակարգի մեջ չեն մտնում. տես՝ ՀՀ սահմանադրական իրավունք, 2. 2008, էջ 687-690 եւ ՀՀ սահմանադրություն, հոդվ. 2): Չնայած մենք կարծում ենք, որ հիշատակված օրենքի «Ձ» կետը տեղական ինքնավարության՝ ինքնակառավարման էությունից չի բխում եւ ենթակա է վերանայման, այն կենսական հարց է եւ անհրաժեշտության դեպքում կարող է եւ պետք է հանրաքվեի առարկա դառնա, մանավանդ որ Սահմանադրությունն ամրագրում է. «... համայնքային նշանակության հարցերը (բոլոր) տեղական հանրաքվեի միջոցով լուծելու» մասին դրույթը, իսկ համայնքային սեփականության՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնի գործունեության կենսական, տնտեսական հիմքի, հարցը չի կարող չտնտնել վերը նշված սահմանման մեջ՝ հատկապես համայնքի այդ իրավունքը որեւէ այլ մարմնի կողմից խախտվելու դեպքում: Ուստի նշված օրենքի այդ նորմի սահմանադրականության հարցը, մեր կարծիքով, վերանայման ենթակա է: Ըստ որում՝ տվյալ դեպքում խոսքը ոչ միայն սոսկ «անմեղ» թվացող սեփականության սովորական օտարման մասին է, այլ համայնքի նորմալ գոյատեւման, կենսագործունեության էական պայմանի խախտման մասին, մի բան, որն արդեն, մեր կարծիքով, կա-

րող է տեղական հանրաքվեի առարկա դառնալ: Բայց, կարծում են նաեւ, այսբանից հետո կառավարությունը իր սխալը կուղղի, ամոթ է ուղղակի:

Ի դեպ, քննարկվող հարցով Աժ-ի որոշման (Պ-1322-29.12.2011-ՊԻ-011/0) նախագծում մատնանշվում են N627-Ն որոշման ընդունման հարցում թույլ տված մի շարք խախտումները՝ համայնքի ղեկավարության, բնակչության կարծիքը չհարցնելը, հանրային բացառիկ գերակա շահի ոչ ճիշտ գնահատումը, մարզում առանց այդ էլ բնապահպան եւ ժողովրդագրական լարված վիճակի ավելի սրումը՝ որոշման իրագործման դեպքում: Օրենսդիր մարմինը՝ Աժ-ն, նշում-մեկնաբանում է, որ N627-Ն որոշման «... բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հղումներն ուղղակի կապ չունեն ազդակիր համայնքների հանրության շահի հետ»: Այսինքն՝ ակնհայտ է, որ կառավարությունը իր որոշմամբ առաջնայնությունը տվել է ոչ թե գերակա, ըստ որում բացառիկ, հանրային շահին, որը տվյալ համայնքի (համայնքների շահն է), նաեւ համապետական, համազգային շահը, այլ անհատական՝ մի իրավաբանական անձի՝ ՓԲԸ-ի, նրա սեփականատերերի շահին, թեպետ այն սքողել, շղարշել է համապետական շահի պաշտպանության կեղծ գունավորումներով: Կառավարության այդ որոշումը կարող է բողոքարկվել ինչպես վարչական դատավարության կարգով, այնպես էլ Սահմանադրական դատարանում: Ի դեպ, դրա գործունեությունը կարող է կասեցնել նաեւ ՀՀ նախագահը (ՀՀ սահմանադրություն, հոդվ. 86), եթե, իհարկե, նախագահը ցանկանա: Ինչպես նաեւ այն կարող է վերացնել ինքը՝ կառավարությունը՝ օրինակ մարդպետի ներկայացմամբ:

Կարծում ենք նաեւ, որ N627-Ն որոշման կապակցությամբ ծագած այս իրավիճակը պետք է առիթ ու բավարար հիմք հանդիսանա տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ համայնքային ինքնավարությանը վերաբերող օրենսդրությունը կատարելագործելու, հստակեցնելու, ժողովրդաիշխանական այդ մարմինների գործունեության համար՝ հուսալի իրավական ու փաստական երաշխիքներ ստեղծելու նպատակով:

Համոզված են նաեւ, չեն վարանում ասել, որ խնդրահարույց հարցով տեսական քաջքշուկն արդյունք է հիմնականում այն բանի, որ իրավասու անձինք (հատկապես բարձրաստիճան՝ ներառյալ առաջին դեմքերը) միասնական են եղել N627-Ն որոշումն ընդունելու եւ իրագործելու հարցում (եթե, իհարկե, այսօր էլ միասնական չեն այդ հարցում): Ցավոք, մեզանում վաղուց պրակտիկա է դարձել ժողովրդի անտարբերությունից, պասսիվությունից ու այսօրվա անբնական խեղճությունից օգուտվելով՝ իրականակտերի՝ առանց պատշաճ նախնական համալիր ուսումնասիրման, գնահատման ու ժողովրդի կարծիքը հարցնելու ընդունումը՝ ելնելով սոսկ օլիգարխիկ, կուսակցական-կլանային եւ այլ խմբավորումների շահերից կամ, ինչպես քողարկված ձեռով են ասում, ելնելով «բիզնեսի» շահերից. որի հետեւան-

քով մենք այսօր ունենք բազմաթիվ ոչ իրավական ակտեր: Այնպես որ՝ N627-Ն որոշումը պատահական չէ, այն ընդհանուր արատավոր սոցիալ-տնտեսական, պետահրավական համակարգի մի մասն է սոսկ: Ուրեմն՝ առանց այդ համակարգի արմատական փոփոխման կամ վերացման «627 որոշումներ» են համանման «իրավական» այլ ակտեր, ցավոք, դեռ շատ կլինեն: Մեզանում ամեն ինչ «օրենքով» է կարգավորվում, օրենքների առատությամբ փոքրիկ Հայաստանը կարճ ժամանակում նույնիսկ նախկին ԽՍՀՄ-ին շուտով կգերազանցի, իսկ ինչ վերաբերվում է դրանց իրավականությանը, ապա այստեղ լիովին կիրառելի են մ.թ.ա. VI-V դարերի չինացի ակադավոր մտածող Լաո Ցզիի խոսքերը. «Երբ օրենքներն ու իրամանները շատանում են, դա նշանակում է, որ շատացնել են գողներն ու ավազակները...»: Ինչ որ է՝ Աստված էլ ավելի վատից մեզ ազատի...

Ինչպես արդեն նշեցինք, ՀՀ նախագահը կարող է մեկանայա ժամկետով կասեցնել կառավարության 2011թ. N627-Ն որոշման գործողությունը եւ դիմել Սահմանադրական դատարան՝ որոշման օրինականությունը պարզելու համար: Սա ամենահուսալի ու վերջնական ճանապարհն է: Իսկ եթե նախագահը դա չի արել կամ չի ուզում անել, ապա, բնականաբար, նշանակում է, որ նա համաձայն է N627-Ն որոշմանը, թեպետ ակնհայտ է, որ նման որոշում՝ առավել եւս ռազմավարական խնդիրներ շոշափող են մանավանդ՝ այդքան «շահութաբեր», առանց նրա նախնայնության համաձայնության չէր կայացվի: Իսկ սա, ցավոք, նշանակում է նաեւ (տա Աստված՝ սխալվեմ), որ հօգուտ համայնքների օբյեկտիվ շահերի հարցի դատական արդարացի լուծումը, մեզն առած, կարող է լուրջ խոչընդոտների հանդիպել:

Որպես ՀՀ քաղաքացի՝ ես ՀՀ նախագահին կուզենայի նաեւ ասել հետեւյալը՝ կոմունիստ ղեկավարները, որոնց այդքան փնովում են կամ փնովում ենք (ես էլ սիրահարված չեմ նրանց)՝ զանազան պատճառաբանություններով, այդ եւ նման այլ հանրավայրեր «թաքցրել» են կենտրոնական՝ ԽՍՀՄ կառավարությունից՝ դրանք պահելով Հայաստանի «նեղ օրվա» համար, բայց այսօր, գաղտնիք չէ, որ դրանք անարգել, գիշատչական շահագործման են ենթարկվում՝ ու ոչ միայն եվրոներով ու դոլարներով լցնում մի քանի կամ մի խումբ մարդկանց գրպանները, այլեւ նպաստում դատարկվող այս երկրի հետագա դատարկմանը, բնակավայրերի ամայացմանը: Պետք է սթափվել. չէ՞ որ հայ ժողովրդի համբերությունն էլ սահման ունի: Նշված հարցով, պարոն նախագահ, Սահմանադրական դատարան դիմելը ոչ միայն սոսկ հայրենասիրական քայլ կլինի: Դա շատ կարելու է նաեւ այն առումով, որ Սահմանադրական դատարանը պաշտոնապես կմեկնաբանի «բացառիկ» հասկացությունը՝ քանզի կառավարության որոշման մեջ, նաեւ հայտնի օրենքում, դա բավարար չափով ընկալելի չէ, ինչն էլ հիմք է դարձել մանիպուլյացիայի՝ Քաջարան գյուղի հարցում:

28 հունվարի 2012թ.



Ազգային բանակի մարտիկները ծանոթանում են մարտական փառքի սրահի ցուցանմուշներին:

# Հայոց բանակի 20-ամյա ուղին

## ՀՈՐԵԼՅԱՆ

Վերջին ժամանակներում հայոց բանակում ոչ կանոնադրական հարաբերությունների հերթանքով փոփոխված ունեցած անցանկալի երեւոյթները՝ սպանություններն ու ինքնասպանությունները, հանրապետության ալեկոծել են հանրության լայն շերտերի հույզերը: Բայց, այնուամենայնիվ, հունվարի 28-ին՝ հայոց բանակի կազմավորման օրը, ամեն ինչ հեղինակալ է մղվում է խոսվում է նորանկախ Հայաստանի ամենակայացած կառույցի մասին, փորձ արվում ներկայացնել նրա անցած ուղին: Իսկ ուղին այն է, որ մեր սահմանների պաշտպանությունը և անկախությունը ձեռք բերելու պայքարն սկսեցինք որսորդական հրացաններով և ֆիդայական ջոկատներով, հետո այդ ջոկատները կառավարությունը համախմբեց մի հրամանատարության ներքո, ստեղծվեց պաշտպանության նախարարությունը, հետո՝ կանոնավոր բանակը:

Հունվարի 28-ին Քաջարանում հավուր պատշաճի նշվեց հայոց բանակի կազմավորման 20-ամյակը: Կեսօրին տարբեր տարիքի ու զբաղմունքի մարդիկ, նախկին ազատամարտիկներն այցելեցին Արցախյան զոյամարտում ընկած համաքաղաքացիների պանթեոն, որտեղ ամփոփված են 27 քաջարանցու աճյունները: Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Ահարոն քահանա Մելքունյանն արդրքի խոսքեր հնչեցրեց, նաեւ ներկաներին հիշեցնելով հայոց բազմադարյա պատմության ընթացքում մեր մղած ազատագրական կռիվները՝ Ավարայրից մինչեւ Սարդարապատ՝ հասնելով մինչեւ մերօրյա ազատամարտ:

Այնուհետեւ հանդիսության մասնակիցները շարժվեցին դեպի Քաջարանի մշակույթի պալատ, որտեղ եղան մարտական փառքի սրահում, կոմբինատի պատմությունն ամփոփող բանգարանում ծանոթանացան ցուցանմուշներին: Իսկ մշակույթի պալատի դահլիճում տեղի ունեցավ օրվա խորհրդին պատշաճող հանդիսավոր նիստ, որում ելույթներով հանդես եկան Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեորգյանը, Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Ահարոն քահանա Մելքունյանը, Կապանի զինկոմ, փոխզորապետ Լեոնիդ Գրիգորյանը, Աժ պատգամավոր Վահե Հակոբյանը: Օրվա բանախոսները ներկայացրին հայոց ազգային բանակի կազմավորման պատմությունը, նաեւ դրվագներ պատմեցին մերօրյա զոյակույցի: Հայրենասիրական երգերով ու բանաստեղծություններով հանդես եկան Քաջարանի արվեստի դպրոցի սաները, քաղաքի դպրոցների աշակերտները, նախակրթարանի մանուկները: Այնուհետեւ ազգային-ֆիդայական երգերով ներկաներին ողջունեցին մայրաքաղաքից ժամա-



Հարգանքի փուրջ մերօրյա ազատամարտում ընկածների հիշատակին:



Միջոցառմանը հնչեցին ազգային-հայրենասիրական երգեր:

նաժերգիչ-երգչուհիները՝ Դավիթ Ամալյան, Լեյլա Սարիբեկյան, Աննա Խաչատրյան, Մկրտիչ Մկրտչյան, Արսեն Գրիգորյան (Մոր): Իսկ երեկոյան Քաջարանի երկինքը լուսավորվեց տոնական հրավառության գույներով:

ՎԱՐՄ ՕՐԲԵԼՅԱՆ

# Մի չկայացած հարցազրույցի մասին

## ԱՆՂՈՒՂԱՐԶ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՆ

«Առաջին լրատվական» էլեկտրոնային կայքում փետրվարի 3-ի «Սյունիքի մարզպետը լրագրողին սպիտակ ներքնաշորով զրույցի է հրավիրել» հրապարակման կապակցությամբ տեղեկացնում ենք, որ ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը որեւէ հեռախոսազրույց չի ունեցել Լոս Անջելեսում հրատարակվող «Ժամանակ» օրաթերթի եւ «Առաջին լրատվական»-ի թղթակցի հետ:

Թիկլայի առունով լծանագին, իսկ լրագրողական տեսանկյունից՝ պրոֆեսիոնալիզմից զուրկ նյութն ամբողջությամբ կեղծիք է եւ ինչ-որ մեկի կողմից մոգոնված ու ուղղորդված հերթական զրպարտություն ՀՀ Սյունիքի մարզպետի դեմ:

Համոզվելու համար, որ ասվածը զուտ ինքնապաշտպանական նպատակով չէ, կարող եք դիմել հեռախոսային օպերատորին՝ ստանալու համար 2012թ. հունվար-փետրվար ամիսների՝ մարզպետի հեռախոսահամարի մուտքային զանգերի վերաբերյալ տեղեկատվություն:

Լիազորված ենք հայտնելու, որ չնայած Սյունիքի մարզպետը, ինչպես եւ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, ունի հեռախոսային խոսակցության զարդանիւթյան իրավունք, սակայն «հարցազրույցի» ստահող լինելն ապացուցելու համար տալիս է իր համաձայնությունը՝ այդ տեղեկատվությունը տրամադրելու:

Փաստերն ուսումնասիրելուց հետո խմբագրությունը, կարծում ենք, իր մեջ ուժ կգտնի հերքելու «հարցազրույց» ամբողջությամբ, այլապես, այդ հերքումը ձեռք կբերվի օրենքի ուժով:

**Սյունիքի մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին, 6 փետրվարի 2012թ.**

# Հայտարարություն

Սյունիքի մարզպետին վերագրվող հեռախոսային հարցազրույցի ստահողության վերաբերյալ ս.թ. փետրվարի 6-ին արդեն իսկ ներկայացրել ենք մեր պարզաբանումը՝ «Մի չկայացած հարցազրույցի մասին» վերտառությամբ, որն ուղարկվել է «1in.am» էլեկտրոնային կայքի խմբագրությանը: Սակայն, հակառակ մամուլի մասին հայաստանյան օրենսդրության պահանջների, այդ լրատվամիջոցը ոչ միայն հրաժարվել է հրապարակել մեր հերքումը, այլեւ, «հարցազրույցի» հավաստիությունը հիմնավորելու համար, իր կայքում տեղադրել է իբր Սուրեն Խաչատրյանի հետ կայացած հարցազրույցի ձայնագրությունը, ինչը, առանց ստուգելու, հրճվանքով տարածել են որոշ լրատվամիջոցներ եւս:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ շրջանավոր այդ ձայնագրությունը, այնուամենայնիվ, որեւէ առնչություն չունի Սուրեն Խաչատրյանի հետ: Ավաճած մեջ համոզվելու համար բավական է համարդրել մարզպետի յուրաքանչյուր խոսք (ձայնագրված կամ տեսագրված) սփռված ձայնագրության հետ: Համադրման արդյունքում, նույնիսկ առանց մասնագետ-փորձագետի եզրակացության, կարելի է վստահաբար համոզվել, որ ձայնագրության մեջ միանգամայն այլ մարդու խոսք է հնչում:

Խմբագրությունը, իբրեւ ապացույց, նշում է լրատվամիջոցի լրանցելեայան հեռախոսահամարը՝ 8186602206: Տարրական բարոյականությունը, միջնդեռ, պահանջում էր տպագրել նաեւ այն հեռախոսահամարը, որին լրագրողը զանգահարել ու հետադարձ հեռախոսազանգ է ստացել:

Մեր ուսումնասիրությունից պարզվել է, որ «1in.am» էլեկտրոնային կայքի լրագրողը Լոս Անջելեսից զանգահարել է 093-00-00-77 հեռախոսահամարով, որտեղից եւ ստացել է հետադարձ զանգը:

Ի գիտություն լրատվամիջոցի խմբագրության (թեւ խմբագրությունն այդ մասին գիտի ի սկզբանե)՝ այդ հեռախոսահամարը չի պատկանում (եւ չի պատկանել երբեք) Սուրեն Խաչատրյանին, ինչը կարող է պարզել (ցանկության դեպքում) յուրաքանչյուր ոք: Ի դեպ, հեռախոսահամարի բաժանորդը, նույն ինքը՝ լրագրողուհու կողմից գիշերային սարդիչ զրույցի մեջ ներքաշված անձնավորությունը, պատրաստ է այդ մասին առավել հանգամանալից տեղեկատվություն ներկայացնել ամեն մի լրատվամիջոցի:

Հույս ունենք, որ «1in.am» լրատվամիջոցը մեր նախորդ եւ սույն հայտարարությունները կիրապարակի ամբողջությամբ եւ ներողություն կխնդրի զրպարտության ու ինչ-որ մեկի անբարո պատվերը կատարելու համար:

**Սյունիքի մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի հետ բաժին, 7 փետրվարի 2012թ.**



